

ԵՐԿԱՅԻՆ ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՈՎ
ԴԱՐՉԱԾԱՅԻՆ ՄԻԱԿՈՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ,
ՌՈՒՄԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Դարձվածային միավորները հիմնականում ժողովրդական մտածողության արդյունք են և կապված են լեզվամտածողության զարգացման հետ: Լեզվում գոյություն ունեցող բառերով, որոնք անվանում են առարկաներ, երևույթներ, հատկանիշներ, հարաբերություններ և զգացմունքներ, մարդու մտածողության ու կենսափորձի զարգացմանը զուգընթաց կազմվել են բառազուգորդումներ, որոնց բաղադրիչները հաճախ հանդես են եկել փոխաբերական իմաստներով: Այս կերպ կապակցությունը ծեռք է բերել նոր իմաստ, որը շատ հաճախ չի բխել բաղադրիչների իմաստների գումարից և կիրառվել է խոսքն ավելի արտահայտիչ, տպավորիչ, ազդեցիկ ու պատկերավոր դարձնելու նպատակով: Պատրաստի, վերաիմաստավորված բառակապակցությունները՝ դարձվածքները, իրենց վրա կրում են աշխարհաճանաչողության, կրոնի և հավատալիքների մասին որոշակի գիտելիքների ազդեցությունը և պայմանավորված են հասարակական գիտակցությամբ: Տարբեր ժողովուրդներ տարբեր դարձվածային միավորներ են ստեղծում համանման երևույթների վերաբերյալ՝ արտացոլելով տվյալ ժողովրդի կենցաղային պայմանները, հոգեբանությունը, ազգային մտածելակերպը: «Ամեն ազգի դարձված իր մեջ պարունակում է տվյալ ազգի սովորույթներն ու ավանդույթները: Նրան հատուկ են բնիկ և վաղնջական ազգային տարրերը» (Ա.Նազարյան, Фразеология современного французского языка, М., ВУЛ, 1976, էջ 41):

Դարձվածային միավորների կազմության գործում մեծ նշանակություն ունեն տվյալ լեզվի բառային կազմը, բառերի իմաստային հարստությունը, բառակազմական հնարավորությունները և լեզվի քերականական առանձնահատկությունները: Յուրաքանչյուր լեզվի դարձվածային միավորների իմաստի համար հիմք են տվյալ լեզուն կրող ժողովրդի հոգեբանությունը, լեզվամտածողությունը, պատմությունը, աշխարհագրական տարածքը, բնակլիմայական պայմանները, կենցաղը, մշակույթը, արհեստները: Որոշ դարձվածքներ հատուկ են միայն տվյալ ժողովրդի կյանքին ու լեզվամտածողությանը, բայց լինում են նաև դարձվածքներ, որոնք կարող են իրենց զուգահեռներն ունենալ մեկ այլ լեզվում: Համարժեք դարձվածքների մի մասը, հնարավոր է, պատճե-

նումով է անցել մի լեզվից մյուսը, սակայն բազմաթիվ դարձվածքներ առաջացել են ինքնուրույնաբար՝ իրենց հիմքում ունենալով համանման դեպքեր, իրադարձություններ, դրդապատճառներ: Մարդու կյանքն ու գործունեությունը, ծնունդն ու մահը, բնավորության գծերը, հատկանիշները իրենց արտահայտությունն են գտնում լեզուների դարձվածային համակարգում:

Հայերենի, ռուսերենի և անգլերենի դարձվածային ֆոնդում հանդիպում են երկնային լուսատուների անվանումներով (*արև, լուսին, աստղ*) դարձվածային միավորներ, որոնք ներկայացնում են համադրվող լեզուների դարձվածքների ընդհանրությունները, ընդգծում առանձնահատկություններն ու տարբերությունները՝ դրսևորելով տվյալ լեզվին բնորոշ իմաստային, քերականական և կառուցվածքային յուրահատկությունները:

Արևը (արեգակ) մեր մոլորակային համակարգի կենտրոնական լուսատուն է, որը փոխաբերական իմաստով նշանակում է կյանք, երջանկություն, գոյություն, պայծառ, փայլուն, շատ գեղեցիկ¹: *Արև* բառը հայերենում հանդես է գալիս դարձվածակազմիչ մեծ հնարավորությամբ²:

Արև առնել – արև ընկնել, տեսնել: Կաքավները իջան արև առած արտերի վրա (ԱԲ):

Արև արեգակ, արև արքայություն – պայծառ, արևոտ օր:

Արևն առնել – սպանել, կյանքից զրկել:

Արև խնդրել – կյանք խնդրել: Գնացեք, ասավ, ազատ ապրեցեք, Սասունցի Դավթին արև խնդրեցեք (ՀԹ):

Արևը զարթոնել – արևը ծագել:

Արևդ երկար լինի՝ երկար արև լինես (օրինանք, մաղթանք) – կյանքդ երկար լինի, շատ ապրես:

Արևդ թաղեմ՝ մեռնի (անեծք) – մեռնես:

Արևս մեռնի (երդում) – կյանքս վկա:

Արևդ չմեռնի (մաղթանք) – չմեռնես, ապրես:

Արևը բաշխել մեկին – մեռնել, իր կյանքի մնացած օրերը բաշխել մեկին: Ասում է ու արևը ապրողներին բաշխում, մեռնում (ՀԹ):

Արևը բռնվել – արեգակը խավարել:

Արևը բարձրանալ – օրը լուսանալ:

Արևը թեքվել՝ խոնարհվել – 1. արևը իջնել, 2. անհաջողության մեջ ընկնել:

¹ Բացատրությունները վերցված են Ա.Ս. Դարիբյանի «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ից, հ. I, ԳԱԱ, Երևան, 1969:

² Դարձվածքները քաղել ենք հիմնականում Ա.Ս. Սուքիասյանի և Ա.Ա. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան»-ից, Երևան, ԵՊՀ, 1975:

Արևը խավարել – մեռնել, կյանքից զրկվել:

Արևը խավարեցնել – 1. մեռցնել, կյանքից զրկել, 2. կուրացնել, լուսից զրկել:

Արևը խփել – արևահար լինել:

Արևը կանաչել – աճել, ծաղկել, մեծանալ:

Արևը կանգնել – կեսօր լինել:

Արևը կծում է – արևը այրում է (անծրեկի նշան է):

Արևդ կծեմ – սիրելիս, հոգիս:

Արևը հանգչել – կյանքը խավարել: Արևս հանգավ, Սարո ջան (ՅԹ):

Արևդ ապրի – երկար ապրես, կեցցես: Արևդ ապրի, չարչի ախպեր... (ՅԹ):

Արևը մթնեցնել՝ սևացնել – կյանքից զրկել, մեռցնել:

Արևը վատ տեղը մեր մտալ – անմպաստ պայմանների պատճառով որևէ բան չկարողանալ կատարել:

Արևը(ս,դ) վկա (երդում) – կյանքը՝ անձը վկա:

Արևի ծենն ածել – կյանք վայելել:

Արևի երես հանել – բացահայտել, երևան հանել:

Արևիդ մատաղ, արևիդ մեռնեմ – կյանքիդ մեռնեմ, արևդ սիրեմ:

Արևիդ սիրուն – քո կյանքի համար, հանուն քո կյանքի (խնդրանքի ձև):

Արևին գալ/ գնալ – արևը դեռ մայր չմտած գալ/գնալ:

Արևին տալ – արևոտ տեղում դնել:

Արևից ընկնել – կյանքից զրկվել: Կարմիր արևից ընկած, Սարո ջան (ՅԹ):

Արևով խնդալ – մեկի կյանքով, առողջությամբ ուրախանալ: Ով ասես՝ նրա արևովն էր խնդում (ԽԱ):

Իմ արև(ը) (երդում) – իմ կյանքը՝ արևս վկա:

Արև աչեր – պայծառ, կրակոտ աչքեր:

Արևի տակ – այս աշխարհում: Արևի տակ իմ սիրուն պես սեր չկա (ԱԻ):

Օր ու արև – կյանք, երջանկություն:

Արեգակի կտոր – շատ գեղեցիկ, արևի նման:

Արև հասակ – կյանքի ծաղկման շրջան, երիտասարդ հասակ:

Կանաչ արև – 1. երիտասարդ կյանք, 2. անմահություն, հավերժություն:

Արևը ջուր է խմում (խսկց.) – ասվում է, երբ արևը մերթ ամպերի տակ է ծածկվում, մերթ դուրս է գալիս:

Կարմիր արևից ընկած – վաղաժամ մահացած:

Արևին ինչ ծյուն տա(ծող) – անելիքը չիմանալ, անելանելի վիճակի մեջ գտնվել: Ինչ քար զցեր անբախտ Անթառամը... ինչ ծյուն տար իր արևին (ՊՊ):

Արև լինի՝ մարդու վրա չի ծագի (խսկց.) – չափազանց ժլատ, չկամ, անբարյացակամ լինել:

Արև լինի, բաշկինակը տասը փարայով կչորացնի (խսկց.) – սարսափելի ժլատ, ուրիշին օգուտ չի տա, առանց փողի ոչինչ չի անի:

Սեկին օր ու արև չտալ – 1. տանջել, հոգին հանել, 2. նեղել, 3. անհանգստացնել:

Օր ու արև չտեսնել – 1. տանջվել, 2. դժբախտ կյանք ունենալ, 3. անեծք:

Արևը սևանալ/սևացնել – գոհվել, կյանքից զրկվել, դժբախտանալ:

Արև բաղադրիչով դարձվածային միավորները հիմնականում խորհրդանշում են կյանք, մահ, լավ կամ վատ իրավիճակներ, մարդկային հատկանիշներ:

Ռուսերենում *солнце/солнышко* բաղադրիչով դարձվածային միավորները սակավաթիվ են՝

Под солнцем – արևի տակ, աշխարհում:

Место под солнцем – 1. բարձր դիրք՝ հասարակության մեջ, 2. գոյության իրավունք:

На всех и солнышко не осветит – բոլորին չես գոհացնի:

Мое солнышко – արևս, իմ արև:

Пока солнце взойдет, роса глаза выест – մինչև առուն ջուր գա, գորտի աչքը դուրս կգա:

Անգլերենում *sun* բաղադրիչով դարձվածային միավորները վկայում են ժողովուրդների ուրույն լեզվամտածողության, կյանքի, կենցաղի տարբերությունների մասին:

Against the sun – (ծով.) ժամացույցի սլաքին հակառակ:

With the sun – ժամացույցի սլաքի ուղղությամբ:

Sun drawing water – արևի ճառագայթները:

The morning sun never lasts a day (ասացվածք) – ոչինչ հավերժ չէ, ամեն ինչ անցողիկ է:

Nothing new under the sun – ոչինչ նոր չէ աշխարհում, ничто не ново под луной.

Certain as the rising sun – անկասկած:

Go round the sun to meet the moon – երկար ճանապարհով գնալ մինչև մոտակա տարածքը:

One's sun is set – փառքը խավարեց, աստղը գլորվեց:

Let not the sun go down on(upon) your wrath – վիրավորանքը երկար մի պահիր, պարզաբանի ր միանգամից:

One's sun is in the ascendant (rising) – աստղը ծագում է, փառքի է հասնում:

Shoot (take) the sun – (ծով.) չափել արևի բարձրությունը:

Light not a candle to the sun – մի փորձիր բացատրել ակնհայտը:

As...as the sun shines on (խսկց.) – նմանը չես գտնի:

Adore (hail, worship) the rising sun – փորձել դուր գալ նոր իշխանությանը:

There are spots on the sun – արևի վրա էլ բծեր կան, ոչինչ կատարյալ չէ, չկա մարդ, որ թերություն չունենա:

Անգլերենում հանդիպող *sun* բաղադրիչով դարձվածային միավորներից առավել կիրառական են հաղորդակցական դարձվածային նախադասությունները, որոնք ներառում են ժողովրդի դարավոր դիտարկումների խորհուրդը:

Լուսինը երկրագնդին ամենամոտ գտնվող երկնային անլույս մարմին է, որ, լինելով երկրի արբանյակը, նրա հետ պտտվում է արեգակի շուրջը և գիշերը արևի լույսը արտացոլելով՝ լուսավորում է երկիրը³: *Լուսին* բաղադրիչով դարձվածքները հայերենում շատ չեն՝

Լուսնի տակ – այս աշխարհում, մեր երկրի վրա: Այս լուսնի տակ ուր էլ գնաս, թե մորդ անգամ մտքից հանես, քո մայր լեզուն չմոռանաս (ԱԿ):

Լուսնից ընկնել/ իջնել – 1. երկրի գործերին անտեղյակ լինել, 2. հանկարծ հայտնվել: Ո՞վ է այս լուսնից ընկածը (ԵԶ):

Լուսնկա երես – լուսնի նման սպիտակ՝ կլոր դեմք ունեցող, սիրունատես:

Լուսին-լուսին (բրբ.) – ուշ-ուշ, ոչ հաճախակի:

Լուսնյակը երդիկից թռավ (բրբ.) – հարմար ժամանակը բաց թողնել:

Լուսնի վրա հաչել – դատարկ, անհասցե հայիոյել, գոռգոռալ:

Լուսնյակին ասում է դու մի դուրս գա, ես հերիք եմ (ժող.) – շատ գեղեցիկ (աղջկա մասին):

Ռուսերենում հանդիպող *лунa* բաղադրիչով դարձվածային միավորներին մեջ կան համարժեքներ՝

Под луной – լուսնի տակ, այս աշխարհում:

С луны свалился – լուսնից ընկնել, գործից անտեղյակ լինել:

Անգլերենն ավելի հարուստ է *moon* բաղադրիչով դարձվածային միավորներով, հանդիպում են և համարժեք դարձվածքներ, և այնպիսիք, որոնք հատուկ են լեզուն կրող ժողովրդին

Like a full moon – լուսնի պես կլոր (դեմքի մասին):

Bark at the moon – հաչել լուսնի վրա, իզուր ժամանակ վատնել:

Shoot the moon – հեռանալ բնակարանից գիշերով՝ վարձը չվճարելու համար:

Once in a blue moon – տարին մեկ անգամ, բացառիկ դեպքերում:

The moon does not heed the barking of dogs (what does the moon care if the dogs bark at her) ասացվածք – շունը հաչի, քամին տանի, լուսնին ինչ փույթ, թե շունը իր վրա կհաչի:

³ Վ. Առաքելյան, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 2, ԳԱԱ, Երևան, 1972:

The moon is a moon whether it shine or not (ասացվածք) – լույս տա՝ չտա, լուսին է:

Cover with the moon(ամեր.)–քնել բաց երկնքի տակ(անապատումի մասին):

Believe that the moon is made of cheese – անհեթեթությանը հավատալ:

Belump over the moon(about smth) – ուրախությունից ցատկել:

Aim at the moon – փառասեր լինել, շատ բարձրի ձգտել:

Ask /cry /wish for the moon (want the moon) – ցանկանալ անհմարինը: "Crying for the moon" had become a principle when he was already much too old for principles(J.Galsworthy "Swan Song" part II ch.V).

Promise smb the moon – ինչ-որ մեկին խոստանալ լուսինը (անիրական բան):

The moon is not seen when the sun shines (ասացվածք) - երբ արևը փայլում է, լուսինը չի երևում:

A moonshine in the water - անիրական հույս:

Աստղը բացատրվում է որպես երկնային լուսատու մարմին, որը գիշերը երևում է երկնքում փայլող կետի նման: Փոխաբերական իմաստով նշանակում է տաղանդով և արժանիքներով փայլող, բախտ, հաջողություն ունեցող: *Աստղ* բաղադրիչով դարձվածային միավորները հայերենում խորհրդանշում են բախտ, հեղինակություն, փառք, գործերի հաջողություն:

Աստղը բացվել–մեկի բախտը բացվել, գործերը հաջող գնալ, աստղը բաց-բախտավոր, երջանիկ:

Աստղով լինել –1.բախտավոր լինել, հաջողության մեջ լինել, 2.հաճելի լինել:

Աստղով մարդ – հաճելի, դուրեկան, բախտավոր մարդ: Իրենց գյուղից դուրս պիտի գա աստղով մի մարդ(ԱԲ):

Աստղերը հաշվել–1 օրը պարապ-սարապ անցկացնել, անգործության մատնվել, 2.երազել, անըջել:

Աստղի լույսը խավարել/խավարեցնել – 1.մեռնել, 2.հեղինակությունը կորցնել:

Բարի /չար/ փայլում/բախտավոր աստղի տակ ծնվել – կյանքում երջանիկ կամ դժբախտ լինել:

Աստղը վառ է – բարի աստղի տակ է ծնվել:

Աստղը գունատվել/թեքվել/ընկնել/ծռվել – ծախորդություն, դժբախտություն:

Աստղը ծովն ընկնել – մեռնել, դժբախտանալ:

Ծագող աստղ – մեծ ապագա խոստացող, մեծ փառք ակնկալող մարդ:

Աստղը շողշողալ/փայլել–գործերը հաջող ընթանալ, վերելք, փառք:

Աստղերի տակ – այս աշխարհում, մեր երկրի վրա: Մի օր կտեսնեն, որ այս աշխարհում բոլորի համար արև կա և կյանք, որ արարչագործ նյութը չի սպառվում այս հողի վրա, այս աստղերի տակ (ՆԶ):

Աստղերի քվոլ/չափ – շատ, անհամար:

Աստղ վեր բերել – հրաշք գործել, անկարելի կատարել:

Աստղը բռնել – 1.բախտը բանել, գործը հաջողել, 2.հավանել, դուր գալ: Աստղը բռնել է, քո ոչ մի խնդիրը չի մերժում:

Աստղ ունենալ/աստղով լինել – բախտավոր լինել, հաջողակ լինել:

Աստղերը ուղի են ընկել – գիշերն անցնում է, ուր որ է լույսը կբացվի:

Ռուսերենում հանդիպող *звезда* բաղադրիչով համարժեք դարձվածային միավորներ են՝

Родиться под счастливой звездой – բախտավոր աստղի տակ ծնվել, հաջողություն ունենալ, երջանիկ լինել – *be born under a lucky star*.

Родиться под несчастливой звездой – դժբախտ աստղի տակ ծնվել, հաջողություն չունենալ – *be born under an unlucky star*.

Хватать звезды с неба – աստղ վեր բերել, անհնարինը իրագործել, տարբերվել արտակարգ հնարավորություններով:

Звезд с неба не хватает – ոչնչով չառանձնացող, միջին կարողությունների տեր:

Звезда первой величины – առաջին մեծության աստղ, հայտնի:

Путеводная звезда – ուղեցույց աստղ, որոշում է գործունեության ընթացքը, ուղեցնում է մի բանի զարգացումը – *one's guiding star*.

Его/ее звезда закатилась – աստղը ընկնել/ խավարել/ հանգչել/ մարել, ծախողության հանդիպել, կյանքից հեռանալ – *one's star was set*.

Восходящая звезда – ծագող աստղ – *rising star*, *have one's star in the ascendant* – հաջողություն ունենալ, փառք, ճանաչում ձեռք բերել:

Считать звезды – աստղերը հաշվել, երազել, ցրված լինել:

Верить в (счастливую) звезду – հույս տաժել մեկի հաջողության նկատմամբ:

Միայն անգլերենում հանդիպող *star* բաղադրիչով դարձվածային միավորները նույնպես խորհրդանշում են հաջողություն, բախտ, ճակատագիր, դժբախտություն:

Follow one's(smb's) star – հետևել ճակատագրին:

Bless/thank one's star – շնորհակալ լինել ճակատագրից:

Curse one's stars – անիծել բախտը:

The stars are against it – ճակատագիրը դեմ է:

Be through with one's star – անհաջողություն ունենալ՝ հաջողությունից հետո:

Believe in one's star – հավատալ ճակատագրին – *верить в звезду*.

Through hardship to the stars – դժվարությամբ հաջողության հասնել:

See stars – աչքերից կայծեր թռչել:

The seven stars (աստղագիտ.) – Մեծ Արջ համաստեղություն:

Արև, լուսին, աստղ բաղադրիչներով դարձվածային միավորները հանդես են գալիս կառուցվածքային տարբեր տիպերով ու կաղապարներով:

Երկանդամ գուսևան+գուսևան կառուցվածքով հանդես են գալիս *արև աչեր, արև հասակ, արև արեզակ, արև արքայութիւն, աստղով մարդ* դարձվածային միավորները: Ածական+գուսևան կառուցվածքով հանդիպում են *կանաչ արև, կարմիր արև, լուսնկա երես* երկանդամ կառույցները:

Մեծաքանակ են բայական երկանդամ, եռանդամ դարձվածային միավորները՝ *արև առնել, արև ընկնել, արևը թեքվել, արև խնդրել, արևը առնել, արևը բարձրանալ, արևը բաշխել, արևը մթնեցնել, արևը խավարել, արևին տալ, արևից ընկնել, արևով խնդալ, լուսնից ընկնել, աստղերը հաշվել, աստղը փայլել, աստղը բացվել, աստղը բռնել, աստղով լինել, արևի ձեռն ածել, արևի երես տեսնել, օր ու արև չտալ, լուսնի վրա հաչել, աստղը ծովն ընկնել, աստղի լույսը խավարել, աստղերը ուղի են ընկել, որոնցում արև, լուսին, աստղ* գոյականները կիրառվում են եզակի և հոգնակի թվով, ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական հոլովներով՝ գրեթե ամբողջ հարացույցով, իսկ դարձվածային միավորի գերադաս անդամը անորոշ դերբայն է: Հաճախ իմաստատարբերակիչ դեր է խաղում որոշիչ հոդը:

Գոյականական համադասական կապակցություն է *օր ու արև* կառույցը՝ գուսևան+չառևապ+գուսևան. որտեղ դարձվածքի երկու համագոր անդամները համադրված են *ու* շաղկապով, իսկ *լուսին-լուսին* համադասական կառույցում բաղադրիչները կապակցված են միացման գծիկով: Կապերն ու կապական բառերը նույնպես զուգորդվում են լուսատուների անվանումների հետ՝ *արևի տակ, լուսնի տակ, աստղերի տակ, աստղերի չափ*:

Ուսերենում հանդիպում են երկնային լուսատու անվանող բաղադրիչներով դարձվածային միավորներ գուսևան+մախդիր+գուսևան կառուցվածքով՝ *место под солнцем, դեռանուն+գուսևան՝* *Мое солнышко, մախդիր + գուսևան + բայ՝* *с луны свалился, անորոշ դերբայ + մախդիր + ածական + գուսևան՝* *родиться под счастливой-несчастливой звездой, ածական+գուսևան՝* *восходящая звезда, путеводная звезда, անորոշ դերբայ+գուսևան՝* *считать звезды, хватать звезды* դարձվածային միավորները, որոնցում գործում են լեզվին հատուկ բոլոր ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները (եզակիի, հոգնակիի, դեմքի, թվի, սեռի համաձայնեցում):

Անգլերենում հիմնականում հանդես են գալիս երկանդամ, եռանդամ բայական դարձվածային միավորներ՝ անորոշ դերբայ+գուսևան / անորոշ դերբայ+մախդիր+գուսևան կառուցվածքային կաղապարներով. *Shoot the sun, go round the sun, meet the moon, shoot the moon, bark at the moon, cover with*

the moon, be over the moon, aim at the moon, ask for the moon, promise smb the moon, follow one's star, bless/curse one's stars, believe in one's star, see stars, որոնցում անորոշ դերբայը նախադաս է, *the sun, the moon* գոյականները համաձայն լեզվի քերականական առանձնահատկության կիրառվում են որոշիչ հոդով, քերականական կապերը արտահայտվում են նախդիրների միջոցով, քանի որ լինելով անջատական տիպի լեզու՝ անգլերենը չունի թեքությունը:

Երեք լեզուներում էլ հանդիպում են հաղորդակցական դարձվածքներ, որոնք ասացվածքները, օրհնանքները, մաղթանքները, անեծքները, երդումներն են *Արև լինի, թաշկինակը տասը փարայով կչորացնի: Արև լինի՝ մարդու վրա չի ծագի* *The moon does not heed the barking of dogs. The moon is not seen when the sun shines. The moon is a moon whether it shine or not. Пока солнце взойдет, роса глаза выест. На всех и солнышко не осветит* երկար արև լինես, արևս(դ)վկա, արևդ թաղեն/մեռնի, արևդ չմեռնի, արևդ ապրի, իմ արևը:

Դարձվածքներում արտացոլված որոշ գաղափարներ հատուկ են մեկ լեզվի և գոյություն չունեն մյուսներում, որոշ դարձվածային միավորներ ունեն համարժեքներ, բայց տարբեր են արտահայտման եղանակները, երբեմն ոճական բնութագրությունը, հանդիպում են ոչ միայն ինքնուրույնաբար ստեղծված դարձվածքներ, այլև նմանակումներ, պատճենումներ:

Հայերենում, ռուսերենում և անգլերենում երկնային լուսատուների անվանումներով դարձվածքների համեմատական ուսումնասիրությունը վկայում է նշված լեզուների իմաստային, կառուցվածքային, քերականական առանձնահատկությունների մասին, որը բխում է այդ լեզուները կրող ժողովուրդների լեզվատաճողությունից և ազգային ինքնատիպությունից:

Phraseological Units with the components naming celestial luminary bodies in Armenian, Russian and English

Semantic, grammatical and structural characteristics of phraseological units with the components *sun, moon, star* are investigated. In the basis of the research is the comparative analysis of the phraseological units in Armenian, Russian and English which illustrates similarities and diversities between semantic, grammatical and structural peculiarities of the phraseological units in the above mentioned languages.

The revealed characteristic features affirm some resemblances and differences existing in language thinking and national originality of native speakers.